



## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Օտարերկրյա պետություններից և միջազգային  
կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի,  
դրամաշնորհների և մարդասիրական օգնությունների  
օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող  
ժամանակավոր հանձնաժողով

Միջանկյալ զեկույց թիվ 3

## **Ներածություն**

ՎԴՄՕ հանձնաժողովի թիվ 1 միջանկյալ զեկույցի մեջ՝ հիմնվելով մեր փորձագետների ուսումնասիրությունների և եզրահանգումների վրա Ազգային ժողովին էին ներկայացվել մի շարք սկզբունքային մոտեցումներ և կարծիքներ: Անցած ժամանակահատվածում մենք շարունակել ենք լրացուցիչ ուսումնասիրություններն ու արդեն հանձնաժողովի անդամների միջոցով շահագրգիռ քննարկումները ոլորտի ղեկավարների և մասնագետների հետ: Արդյունքում հատակեցվել են դիրքորոշումները, պարզաբանվել վիճահարույց խնդիրները և որ ամենակարևորն է արձանագրել ենք ոլորտում նկատելի տեղաշարժերը և այն բացթողումներն ու թերությունները, որոնք առկա են:

ՎԴՄՕ հանձնաժողովի միջանկյալ թիվ 1 զեկույցում արձանագրված մի շարք թերություններ (ՀԶԾՂԳ-ի գրանցման և վերագրանցման, Ծրագրի ենթավարկային պայմանագրով գրավի պայմանագրի բացակայության, Վարկային համաձայնագրով ձեռք բերված, ինչպես նաև կատարված շինարարական աշխատանքների արդյունքում ձևավորված ակտիվները ՀԶԾՂԳ-ից ԵԶԿՓԲԸ-ին փոխանցման և այլն) այս պահի դրությամբ կարգավորված են կամ կարգավորվում են, որին զգալի չափով նպաստեցին ՎԴՄՕ հանձնաժողովի աշխատանքները:

### **1. ՎԴՄՕ հանձնաժողովի միջանկյալ զեկույց. 30 մարտի 2004թ.**

1.1. Ս/թ մարտի 30-ին ՎԴՄՕ հանձնաժողովի ներկայացրել է ՀՀ Ազգային ժողովին միջանկյալ զեկույց կատարված աշխատանքի վերաբերյալ, որի մեծ մասը կապված է եղել Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված Համայնքային զարգացման վարկային ծրագրի ուսումնասիրության հետ:

### **1.2. Համայնքային զարգացման ծրագիր**

1.3. Չեկույցում ներկայացվել են ծրագրի տեխնիկական և կոմերցիոն ասպեկտները՝ Հարցականի տակ է դրվել միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ մատնանշելով առավել վիճելի արդյունքները՝ կապված ԾԶԳ-ի և ծրագիրը իրականացնող օտարերկրյա ընկերության (Օպերատոր, «Էյ. Յուրիլիթի» ընկերություն) պատասխանատվության շրջանակների և գործունեության արդյունավետության հետ:

1.4. Չեկույցը բանավեճի առարկա դարձավ: Ս/թ մարտի 30-ի զեկույցում հնչեցված գլխավոր խնդիրները հետևյալն էին:

- ա. **Հոսակորուստների հայտնաբերման համար Օպերատորի կողմից կիրառված մեթոդալոգիան**, որը չէր ընդունվել անկախ տեխնիկական աուդիտորի կողմից:
- բ. **Համակարգում վթարների քանակի կտրուկ աճը:**
- գ. **Շահերի բախումը**, որը հնարավոր է դարձել Օպերատորի լիազոր ներկայացուցչի կողմից ԵԶԿՓԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնը համատեղելու արդյունքում:
- դ. **Համայնքային զարգացման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի բաղադրությունը**, համաձայն որի վարկային միջոցների ավելի քան քառորդ մասը ծախսվել է կառավարման և խորհրդատվական ծառայությունների վրա:
- ե. **Դավթաշեն թաղամասի ջրամատակարարման խնդիրը:** ՎԴՄՕ հանձնաժողովը սոցիոլոգիական հարցման միջոցով պարզել էր, որ Դավթաշեն թաղամասի ջրամատակարարումը շուրջօրյա չէ:
- զ. **Օպերատորի կողմից ծրագրի աշխատանքներին օտարերկրյա մասնագետների ներգրավման հարցը:**
- է. **Ջրաչափերի գնման և տեղադրման հարցը:**

#### **ՀԶԾՂԳ-ի կողմից ստացված մեկնաբանությունները և պարզաբանումները**

##### **1. Հոսակորուստների հայտնաբերում**

ՀԶԾՂԳ-ը չի համաձայնվել հանձնաժողովի եզրակացության հետ և համարում է, որ Օպերատորը պատշաճ կերպով է իրականացրել հոսակորուստների հայտնաբերման ծրագիրը: Որպես Օպերատորի աշխատանքի արդյունավետության օրինակ է բերվում այն փաստը, որ ջրառը, որը ծրագրի իրականացման սկզբում կազմում էր 435 մլն խ.մ., պակասել է 50 մլն. խ.մ.-ի չափով, ինչը, ըստ ՀԶԾՂԳ-ի, ջրամատակարարման տևողության աճի պայմաններում վկայում է հոսակորուստների կրճատման մասին: Հարկ է սակայն, նշել, որ ջրաչափերի տեղադրումից հետո մեկ շնչին ընկնող ջրի սպառումը կրճատվել է ավելի քան 2 անգամ: Այսպիսով ջրառի նվազեցումը կարող է բացատրվել նաև այս փաստով:

##### **2. Համակարգում վթարների աճ**

Մարտի 30-ի զեկույցում հանձնաժողովը մատնանշել է այն փաստը, որ «Կառավարման պայմանագրի» պահանջներին հակառակ, համակարգում գրանցվող վթարների թիվը

կտրուկ աճել է: Ծրագիրը իրականացնող կազմակերպությունները նպատակ են դրել ապահովել բնակչության շուրջօրյա ջրամատակարարում, ինչի նպատակով բարձրացվել է համակարգում առկա ճնշման մակարդակը, որն իր հերթին բերում է հնամաշ խողովակների վթարների:

ՀԶԾՂԳ-ի պնդմամբ *«չի կարելի ակնկալել, որ վթարների հաճախականությունը կարող է կրճատվել նման մաշված ցանցում...»*: *«Վթարների հաճախականության աճը չի վկայում ջրամատակարարման համակարգի վիճակի վատթարացման մասին, այլ նպաստում է վատթար վիճակում գտնվող հատվածների հայտնաբերմանն ու վերացմանը»*: Սա անուղղակիորեն հաստատում է ՎԳՄՕ հանձնաժողովի եզրակացությունը այն մասին, որ Օպերատորը չի կատարել հոսակորուստների հայտնաբերման ծրագիրը, քանի որ վատթար վիճակում գտնվող հատվածները հայտնաբերվում են միայն դրանցում վթար գրանցելուց հետո:

Այս կապակցությամբ պետք է նաև նշել, որ վերջին մեկ տարվա ընթացքում, համաձայն անկախ աուդիտորի հաշվետվության, ջրամատակարարման համակարգում գրացված վթարների թիվը աճել է մոտ 2.5 անգամ և կազմել 5158 վթար, այսինքն՝ մոտ 5 անգամ ավելի, քան 2000թ.-ին, երբ Օպերատորը սկսեց իր գործունեությունը: Հանձնաժողովը բողոքներ է ստացել, որ վթարների հետեւանքների վերացումը օպերատիվ կերպով չի իրականացվում և որոշ դեպքերում բազմաբնակարան շենքերը ջրագրկվում են 1-3 օրվա ընթացքում: Եվս մեկ կարևոր և բացասական գործոն է հանդիսանում վթարների վերացման հետ կապված լրացուցիչ ծախսերը, որոնք ավելացնում են ջրի ինքնարժեքը: Դեռևս խիստ բարձր են նաև ջրամատակարարման բաշխիչ և բազմաբնակարան շենքերի ցանցերում առկա հոսակորուստները (ավելի քան 70%):

### **3. Ծախերի բախում**

ՀԶԾՂԳ-ը գտնում է, որ Օպերատորին ԵԶԿՓԲԸ-ի գործադիր մարմնի ֆունկցիաների փոխանցումը չի հակասում օրենսդրությանը, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 115 հոդվածը նախատեսում է բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պայմանագրով այլ առևտրային կազմակերպության տալու հնարավորությունը: Սակայն պետք չէ մոռանալ, որ տվյալ առևտրային կազմակերպությունը «Կառավարման պայմանագրով» հատուկ պարտավորություններ ունի ԵԶԿՓԲԸ-ի առջև: Այսինքն, իրար են խառնված հաշվետուն և հաշվետառ:

### **4. Ծախսերի բաղադրությունը**

Հիշեցնենք, որ ս/թ մարտի 30-ի զեկույցում ՎԳՄՕ հանձնաժողովը ներկայացրել էր վարկային միջոցների բաշխումը ըստ ծախսային հոդվածների: Այն ուներ հետևյալ տեսքը՝

ա.	Շինարարական աշխատանքներ	22%
բ.	Ապրանքներ	41%
գ.	Կառավարման և խորհրդատվական ծախսեր	27%
դ.	Կանխավճար	6%
ե.	Չբաշխված միջոցներ	4%

Ինչպես տեղեկացրել է հանձնաժողովին ՀԶԾՂԳ-ը, չբաշխված միջոցների բաշխումից հետո ծախսային հիմնական երեք բաղադրիչները ստացել են հետևյալ տեսքը.

ա.	Շինարարական աշխատանքներ՝	25%
բ.	Ապրանքներ՝	41%
գ.	Կառավարման և խորհրդատվական ծախսեր՝	23%

Այսպիսով, ՀԶԾՂԳ-ը, ընդհանուր առմամբ, հաստատել է ՎԳՄՕ հանձնաժողովի եզրակացությունը այն մասին, որ վարկային միջոցների մոտ 1/4-րդ մասը ծախսվել է կառավարչական և խորհրդատվական ծառայությունների վրա:

## 5. Դավթաշեն թաղամասի ջրամատակարարումը

Ինչպես արդեն նշվել է հանձնաժողովի ս/թ մարտի 30-ի զեկույցում, Դավթաշեն թաղամասի շուրջօրյա ջրամատակարարումը պետք է ապահովված լիներ դեռևս 2002թ. նոյեմբերին: Սակայն ինչպես ցույց են տվել Դավթաշենի բնակիչների մեջ անցկացված հարցման արդյունքները, թաղամասի շուրջօրյա ջրամատակարարումը ապահովված չէ: ՀԶԾՂԳ-ը չի ընդունել հարցման արդյունքները և որպես շուրջօրյա ջրամատակարարման ապացույց մատնանշում է 19.11.2002թ. Թաղապետարանի, ՀԶԾՂԳ-ի, ԵԶԿՓԲԸ-ի և այլ շահագրգիռ կազմակերպությունների կողմից ստորագրված ակտը: Բերվել են նաև շուրջօրյա ջրամատակարարման ապահովման շեղումների պատճառներ. վթարների վերացում, շինարարական աշխատանքների իրականացում, ջրակորուստների բացահայտում, բնական աղետների հետևանքներ, ջրի վարձավճարների անբավարար վճարումների հետևանքով անջատումներ և այլն: Հարկ ենք գտնում նշել, որ հարցման ընթացքում բաժանորդներին հարց է տրվել ջրամատակարարման ընդհանուր տևողության վերաբերյալ, իսկ արդյունքները ամփոփելիս հաշվի չեն առնվել մասնավոր դեպքերը, որոնք մատնանշվում են ՀԶԾՂԳ-ի կողմից:

## 6. Օպերատորի աշխատակազմը

Ինչպես նշվել է ա/թ մարտի 30-ի գեկույցում, հանձնաժողովին չէր հաջողվել պարզել, թե քանի օտարերկրյա մասնագետներ են ներգրավվել ծրագրի աշխատանքներին Օպերատորի կողմից: Ավելի ուշ հանձնաժողովը ստացել է տվյալներ, ինչպես ՀՁԾՂԳ-ից, այնպես էլ Օպերատորից: Համաձայն ՀՁԾՂԳ-ի, Օպերատորի աշխատակազմը մասնակցել է ծրագրի իրականացմանը ընդհանուր առմամբ 1508 ամիս: Սակայն, ինքը Օպերատորը ներկայացրել է այլ տվյալներ՝ մոտ 300 ամիս: Հիշեցնենք, որ «Կառավարման պայմանագրի» համաձայն այս ցուցանիշը պետք է կազմի 552 ամիս:

## 7. Ջրաչափեր

Որոշակի պարզաբանումներ են մտցվել նաև ԵՋԿՓԲԸ-ի կողմից գնված և տեղադրված ջրաչափերի հարցում: Մինչև 2003թ. ջրաչափերը գնվել են տեղական առևտրային կազմակերպություններից: Մեկ ջրաչափի գինը, ԱԱՀ-ն հաշվի առած, կազմել է 8028 դրամ 90 լումա: Դրանք իրացվել են 8040 դրամով, տարբերությունը (11 դրամ 10 լումա՝ ԵՋԿՓԲԸ տրանսպորտային ծախսերն են): ԵՋԿՓԲԸ տնօրեն Ռ. Վոլկլինգի խոսքերով, տեղական մի շարք կազմակերպություններ ջրաչափեր են վաճառել ԵՋԿՓԲԸ-ին, որոշ դեպքերում ջրաչափական սարքերը տրամադրվել են ապրանքային վարկի տեսքով, քանի որ ԵՋԿՓԲԸ չի ունեցել դրանց գնման համար անհրաժեշտ միջոցներ:

Չինական արտադրության ջրաչափերը, որոնց մասին հիշատակվել է հանձնաժողովի միջանկյալ գեկույցում, իսկապես գնվել են 5-6 դոլար արժեքով: ՀՁԾՂԳ-ի տվյալների համաձայն, դրանց մեծ մասը դեռևս չի իրացվել և գտնվում է պահեստում: ԵՋԿՓԲԸ-ի համար ջրաչափերի միջին ինքնարժեքը կազմել է 6640 դրամ 87 լումա՝ ԱԱՀ-ն հաշվի առած: ԵՋԿՓԲԸ ղեկավարության խոսքերով, դրանք վաճառվելու են բնակչությանը 6900 դրամով: Հանձնաժողովի փորձագետները այցելել են ԵՋԿՓԲԸ պահեստ: Ի դեպ, ելակետային տարվա 3586-ի դիմաց, 4-րդ տարում տեղադրվել է ավելի քան 290 000 հատ ջրաչափ, ինչը ուղղակիորեն կապված է ջրի վարձավճարների ներման օրենքի կիրարկման հետ:

## 1. ԵԶՐԱՓՈՒԿ ԶԵԿՈՒՅՑ

Համայնքային զարգացման ծրագրի ուսումնասիրության վերջնական զեկույցի ուշացումը բացատրվում է նրանով, որ ՎԴՄՕ հանձնաժողովի միջանկյալ զեկույցում բարձրացված խնդիրների վերաբերյալ պարզաբանումները ստացվել է ԵԶԿՓԲԸ-ից և ՀԶԾՂԳ-ից ընդամենը 1.5 ամիս առաջ, այսինքն սեպտեմբերի կեսին: Բացի այդ, հանձնաժողովը ստիպված էր հետաձգել իր զեկույցը, քանի որ չէր ստացել ԵԶԿՓԲԸ 2003թ. անկախ աուդիտորական հաշվետվությունը: KPMG անկախ աուդիտորը սկսել էր իր աշխատանքը դեռևս ս/թ ապրիլին և ավարտել այն հունիսի կեսին: Սակայն անկախ աուդիտորի հաշվետվությունը տրամադրվել է ՎԴՄՕ հանձնաժողովին ընդամենը մեկ ամիս առաջ: Ուշացումը բացատրվում է նրանով, որ աուդիտորական հաշվետվությունը մեծ հետաքրքրություն էր առաջացրել ինչպես ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, այնպես էլ Համաշխարհային Բանկի մոտ: Դեռևս հաշվետվության նախապատրաստման ընթացքում ՎԴՄՕ հանձնաժողովը գրավոր դիմել է Համաշխարհային Բանկին՝ խնդրելով հատուկ ուշադրություն դարձնել այդ հաշվետվությանը:

## 2.1. Էլեկտրաէներգիայի սպառումը, դրա դիմաց վճարումները և կուտակված պարտքերը

- 2.1.1. Էլեկտրաէներգիայի գծով ծախսերը մեծ տեսակարար կշիռ ունեն ԵՋԿՓԲԸ ընդհանուր ծախսերի մեջ: Համաձայն «Կառավարման պայմանագրի» պահանջների, Օպերատորի հիմնական նպատակներից է եղել կրճատել Էլեկտրաէներգիայի սպառումը, այդպիսով նվազեցնելով ընկերության ծախսերը:
- 2.1.2. Հանձնաժողովը ուսումնասիրել է տարբեր աղբյուրներից ստացված ինֆորմացիա, որը վերաբերվում է ԵՋԿՓԲԸ կողմից Էլեկտրաէներգիայի սպառման ծավալներին, ինչպես նաև դրա դիմաց վճարումներին: Տվյալները վերցվել են Օպերատորի տարեկան հաշվետվություններից, ԵՋԿՓԲԸ հաշվապահական փաստաթղթերից, ԵՋԿՓԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվություններից, որոնք նախապատրաստվում են KPMG անկախ աուդիտորի կողմից: ԵՋԿՓԲԸ կողմից սպառված Էլեկտրաէներգիայի վերաբերյալ տվյալներ է տրամադրել նաև «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ընկերությունը: Ստացված տվյալները վերաբերվում են 1999-2003թթ. ժամանակաշրջանին: Հարկ է նշել, որ KPMG կողմից պատրաստված տարեկան հաշվետվությունների տվյալները զգալիորեն տարբերվում են այլ աղբյուրների տվյալներից:
- 2.1.3. Տվյալների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ԵՋԿՓԲԸ Էլեկտրաէներգիայի դիմաց կուտակել է մեծ գումարների պարտքեր: 1997-1999թթ. առաջացածների մարման նպատակով ՀՀ Կառավարությունը տրամադրել է խոշոր գումարներ՝ վարկերի և սուբսիդիաների տեսքով: 2002թ. հոկտեմբերին իրականացվել է Էլեկտրական ցանցերի սեփականաշնորհումը, որից հետո Էլեկտրաէներգիայի մատակարարման պետական համակարգի նկատմամբ ունեցած պարտքերը փոխանցվել էին «ՀայԳազԱրդ» ընկերությանը: «ՀայԳազԱրդ»-ի հաշվին է փոխանցվել նաև ԵՋԿՓԲԸ պարտքը, որը 2002թ. հոկտեմբերի դրությամբ կազմում էր 12 838 900 000 (մոտ 12.8 մլրդ) դրամ: Ի դեպ, «ՀայԳազԱրդ» ընկերության հաշվին փոխանցվել են մի շարք պետական ձեռնարկությունների Էլեկտրաէներգիայի գծով պարտքերը, որոնց ընդհանուր գումարը կազմել էր մոտ 250 մլն դոլար:
- 2.1.4. Համաձայն 06.11.2003թ. ՀՀ Կառավարության թիվ 1693 որոշման, ԵՋԿՓԲԸ ստացել է բյուջետային աջակցություն, որից 7 084 000 000 (ավելի քան 7 մլրդ) դրամը, ուղղվել է «ՀայԳազԱրդ» ընկերությանը՝ Էլեկտրաէներգիայի պարտքերի մի



մասը մարելու նպատակով: Ներկայումս ԵԶԿՓԲԸ-ի պարտքը «ՀայԳ-ազԱրդ» ընկերության առջև կազմում է մոտ 2.5 մլրդ դրամ:

- 2.1.5. Հարկ է նշել, որ էլեկտրական ցանցերի սեփականաշնորհումից հետո, ԵԶԿՓԲԸ համեմատաբար կանոնավոր վճարել է սպառված էլեկտրաէներգիայի դիմաց, սակայն դարձյալ կուտակել է է պարտք, որի ընդհանուր գումարը կազմել է 220 286 354 դրամ (մոտ 220 մլն): Պարզ է, որ նոր պայմաններում արհեստական պարտքի կուտակումը դարձել էր անհնարին:
- 2.1.6. Վերլուծելով էլեկտրաէներգիայի պարտքերի կուտակման դինամիկան՝ դժվար չէ նկատել, որ դրանց զգալի մասը կուտակվել է 2000-2001թթ. ժամանակահատվածում, այսինքն Օպերատորի գործունեության առաջին 2 տարիներին, որոնց ընթացքում ՀՀ Կառավարության աջակցությունը ընկերությանը զգալիորեն նվազեց՝ կազմելով մոտ 1 մլրդ դրամ:
- 2.1.7. 2003թ. վերջի դրությամբ ԵԶԿՓԲԸ-ին էլեկտրաէներգիայի պարտքերը վճարելու նպատակով տրամադրված աջակցության ընդհանուր գումարը կազմել է 14 762 000 000 դրամ (մոտ 14.7 մլրդ):

## 2.2. ԵԶԿՓԲԸ ծախսերը և բյուջետային աջակցությունը


2.2.1. Ըստ Օպերատորի, ընկերության տարեկան ծախսերի մեծ մասը կազմում են էլեկտրաէներգիայի վարձավճարները:

2.2.2. Սկսած 2000թ.-ից ԵԶԿՓԲԸ էլեկտրաէներգիայի գծով ծախսերը շարունակաբար նվազում են, ինչը հանդիսանում է Համայնքային զարգացման ծրագրի գլխավոր նպատակներից մեկը:

Օպերատորը տրամադրել է տվյալներ ընթացիկ ծախսերի վերաբերյալ: Չնայած 1999-2003թթ. ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի ծախսերի կրճատմանը, ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարը մնացել է գրեթե նույն մակարդակի վրա՝ այլ ծախսերի ավելացման պատճառով: Այսինքն, ընդհանուր ծախսերի կրճատում, որը պետք է լիներ էլեկտրաէներգիայի հետ կապված ծախսերի նվազման տրամաբանական արդյունք տեղի չի ունեցել:

### Աղյուսակ 1


Էլեկտրաէներգիայի գծով ծախսերի և ընթացիկ ծախսերի համամասնությունը



*Կապույտ սյուները՝ էլեկտրաէներգիայի ծախսեր, կարմիր սյուները՝ այլ ծախսեր, դեղին սյուները՝ ընդամենը ընթացիկ ծախսեր (առաջին երկուսի գումարը):*

2.2.3. Աղյուսակ 2-ը ցույց է տալիս 1996-2003թթ. ժամանակահատվածում ընդհանուր ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը էլեկտրաէներգիայի գծով ծախսերին, ինչպես նաև ՀՀ Կառավարության կողմից տրամադրված աջակցության գումարները:

## Աղյուսակ 2



*Նարնջագույն՝ ծախսերի ամբողջ գումարը, կապույտ՝ էլեկտրաէներգիայի ծախսեր, կարմիր՝ ՀՀ Կառավարության աջակցություն:*

Համադրելով ԵԶԿՓԲԸ ծախսերը և բյուջեից ստացված աջակցության չափերը, կարելի է նկատել, որ 1996-2003թթ. ԵԶԿՓԲԸ ծախսերի զգալի մասը վճարվել է ՀՀ Կառավարության կողմից, որը բյուջետային վարկեր և սուբսիդիաներ է տրամադրել, ինչպես նաև հետագայում ներել է ընկերության վարկերի գծով մնացած պարտքերի մի մասը: Բացի այդ, ԵԶԿՓԲԸ կրճատել է իր պարտքերը, ՀՀ Կառավարության նախաձեռնությամբ իրականացված հաշվանցման գործարքների միջոցով:

2.2.5. 1996թ. հուլիս – 2003թ. դեկտեմբերի ժամանակահատվածում ԵԶԿՓԲԸ-ին տրամադրված և փաստաթղթային հիմնավորում ունեցող պետական աջակցության գործարքների գումարը կազմել է 33 419 963 200 դրամ՝ մոտավորապես 60 մլն ԱՄՆ դոլար:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ԵԶԿՓԲԸ-ին տրամադրված պետական աջակցության գործարքների ցանկը.

## Աղյուսակ

1997		Բյուջետային վարկ	-----	1 400 000 000 դրամ
1997		Բյուջետային վարկ	-----	1 117 000 000 դրամ
1998		Բյուջետային վարկ	-----	6 082 554 500 դրամ
1999	մայիս	Բյուջետային վարկ	-----	1 000 000 000 դրամ
		<b>Ընդամենը</b>	-----	<b>9 599 554 500 դրամ</b>
1999		Սուբսիդիա	-----	2 222 000 000 դրամ
2000		Սուբսիդիա	-----	0 556 000 000 դրամ
2001		Սուբսիդիա	-----	0 277 000 000 դրամ
2002		Սուբսիդիա	-----	0 270 000 000 դրամ
2002	մայիս	Կրեդիտորական պարտքերի դուրս գրում		2 426 981 000 դրամ
2002	դեկտեմբեր	Բյուջետային դրամաշնորհ	-----	3 072 527 700 դրամ
2003		Ներդրումային հիմնադրամ	-----	2 748 000 000 դրամ
2003	դեկտեմբեր	Բյուջետային դրամաշնորհ	-----	1 935 000 000 դրամ
		<b>Ընդամենը՝</b>	-----	<b>13 507 508 700 դրամ</b>
2003	դեկտեմբեր	Բյուջետային աջակցություն՝ պարտքերի վերակառուցվածքավորման համար, ուղղվել է ԵԶԿՓԲԸ կանոնադրական կապիտալի համալրմանը:	-----	10 312 900 000 դրամ

2.2.7 Այսպիսով, 8 տարիների ընթացքում ԵԶԿՓԲԸ ի վիճակի է եղել վճարել 38 մլրդ դրամ ծախսերից ընդամենը 4 մլրդ դրամը և գրեթե ամբողջովին կախման մեջ է եղել պետական աջակցությունից: Այդ 8 տարիներից վերջին 4-ը կազմում են Օպերատորի գործունեության ժամանակահատվածը:

2.2.8 KPMG անկախ աուդիտորի գնահատմամբ, մոտ ապագայում ԵԶԿՓԲԸ ի վիճակի չի լինի գործել սեփական ուժերով և բյուջետային աջակցության կարիք է զգալու: 2003թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունում անկախ աուդիտորը գրում է. «ՀՀ Կառավարության շարունակական օժանդակությունը վճարող կլինի ԵԶԿՓԲԸ ապագա գործունեության համար: Եթե այս օժանդակությունը չտրամադրվի, կառաջանան զգալի կասկածներ ընկերության անընդհատության սկզբունքով գործունեությունը շարունակելու կարողության վերաբերյալ»:

2.2.9 Փաստորեն, օտարերկրյա Օպերատորի ներգրավումը որևէ կերպ չի թեթևացրել ՀՀ Կառավարության հոգսերը՝ կապված Երևանի Ջրմուղ-Կոյուղու համակարգի հետ:

### 2.3. ԵԶԿՓԲԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

- 2.3.1. ԵԶԿՓԲԸ եկամուտները գոյանում են ջրի սպառողներից՝ բնակչության, առևտրային և բյուջետային կազմակերպությունների, վարձավճարների հավաքագրումից: Ըստ Օպերատորի, բնակչությունից հավաքագրված վարձավճարները կազմում են ընդհանուր գումարի 74%-ը, մնացած 26%-ը կազմակերպությունները:
- 2.3.2. Օպերատորի հաշվետվությունները ԵԶԿՓԲԸ եկամուտների գնահատման միակ աղբյուրը չէ: Հանձնաժողովը հավաքագրել է ինֆորմացիա ՀՀ հարկային պետական ծառայությունից, ԵԶԿՓԲԸ հաշվապահությունից, ինչպես նաև KPMG տարեկան հաշվետվություններից: Ստացված տվյալները, որպես կանոն, չեն համապատասխանում միմյանց: Տիրող խառնաշփոթը այնքան մեծ է, որ նույնիսկ ԵԶԿՓԲԸ ֆինանսական գծով տնօրենը դժվարացավ համապատասխանություն գտնել իր կողմից տրամադրված տվյալների և ՀՀ հարկային պետական ծառայության կողմից ներկայացված տեղեկանքի միջև:
- 2.3.3. Այնուամենայնիվ, ջրի վարձավճարների հավաքագրումը էականորեն բարելավվել է՝ նաև ի շնորհիվ ջրի վարձավճարների պարտքերի մարման օրենքի կիրարկմանը: Ջրի վարձավճարների հավաքագրումը Օպերատորի գործունեության 4-րդ տարում գերազանցել է 100%-ը: Այն ըստ սպառողների կատեգորիաների կազմում է. բնակիչներ՝ 116%՝ ելակետային տարվա 10.2% դիմաց, առևտրային կազմակերպություններ՝ 107%՝ 47%-ի դիմաց, բյուջետային կազմակերպություններ՝ 103%՝ 60.4%-ի դիմաց:

## 2.4. Փաստաթղթաշրջանառության թերություններ

2.4.1. Ֆինանսական գործարքների փաստաթղթաշրջանառության թերությունները զգալի դժվարություններ են ստեղծել Վ.Ղ.ՄՕ հանձնաժողովի ուսումնասիրության ընթացքում: Իսկ մեկ գործարքի վերաբերյալ հանձնաժողովին այդպես էլ չի հաջողվել հստակ պատասխան ստանալ ԵՁԿՓԲԸ-ից:

## 2.5. ՀՀ Կառավարության 1996թ. օգոստոսի 8-ի թիվ 243 որոշում

2.5.1. ՀՀ Կառավարության 08.08.1996թ. թիվ 243 որոշումը սահմանում է պետական ձեռնարկությունների միջև էներգակիրների մատակարարման գծով պարտքերի վերակառուցման գործընթացը: ՀՀ Կառավարությունը որոշել է ձևակերպել 5 տարի ժամկետով, լիբոր + 0.5% դրույքաչափով 34 023 000 (մոտ 34 մլն) դոլարին համարժեք բյուջետային վարկ՝ հինգ պետական ձեռնարկություններին 1996թ. հուլիսի 1-ի դրությամբ էներգակիրների դիմաց առաջացած պարտքերի գումարի չափով: Վարկը պետք է ձևակերպվեր հետևյալ ձեռնարկությունների հաշվին՝

- «Նաիրիտ» ՓԲԸ
- Ավտոդողերի գործարան
- «Հայքիմմեքենա» ԱՄ
- ՀՀ քաղաքաշինության նախարարության «Հայջրմուղկոյուղի» ՊՉ
- Երևանի քաղաքապետարանի «Ջրմուղկոյուղի» ՊՉ:

2.5.2. Որոշման մեջ սահմանված չէ թե պետական ձեռնարկություններից յուրաքանչյուրին ինչ չափի գումար է հասնում, սակայն ԵՁԿՓԲԸ նշված է վարկառուների ցանկում:

2.5.3. ՀՀ Կառավարության 08.08.1996թ. թիվ 243 որոշումը իր ուժը կորցրել է ՀՀ Կառավարության 02.12.1997թ. թիվ 551 որոշման ընդունումից հետո, որը վերաբերվում էր մի շարք պետական ձեռնարկությունների ֆինանսների վերակառուցմանը:

2.5.4. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ընդունել էր Թուրքմենստանի նկատմամբ «Հայթուրտբեյդ» ընկերության պարտքը՝ 34 023 000 (34 մլն) դոլարի չափով: Այսպիսով, էներգակիրների գծով պարտքեր ունեցող կազմակերպությունների պարտավորությունները նույնպես փոխանցվեցին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը: Համաձայն թիվ 551 որոշման մեջ բերված կարգի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և չորս

պետական ձեռնարկությունների, այդ թվում ԵԶԿՓԲԸ-ի միջև, պետք է կնքվեին պարտքերի մարման պայմանագրեր՝ 5 տարվա մարման ժամկետով: Պայմանագրերը պետք է կնքվեին հետևյալ չորս պետական ձեռնարկությունների հետ.

- «Նաիրիտ» ՓԲԸ
- «ՀայԶրմուդԿոյուղի» ՊԶ
- Երևանի «ԶրմուդԿոյուղի» ՊԶ
- «Հայջրտնտ» ՀՆՊԶ

- 2.5.5. Հանձնաժողովին չի հաջողվել ինֆորմացիա ստանալ այն մասին, թե արդյոք ԵԶԿՓԲԸ միջոցներ է ստացել 08.08.1996թ. թիվ 243 որոշման համաձայն: Հայտնի չէ նաև, թե արդյոք ԵԶԿՓԲԸ կնքել է պարտքի մարման պայմանագիր ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, թե՛ ոչ:
- 2.5.6. Հանձնաժողովը գրավոր դիմել է ԵԶԿՓԲԸ-ին՝ այս հարցի շուրջ պարզաբանումներ ստանալու նպատակով: Սակայն պատասխան մամակում ԵԶԿՓԲԸ ղեկավարությունը պարզապես թվարկել է ՀՀ Կառավարության որոշումների ընդունման ժամանակագրությունը: ԵԶԿՓԲԸ շեշտը դնում է այն փաստի վրա, որ 02.12.1997թ. թիվ 551 որոշումը ուժը կորցրած է համարվել ՀՀ Կառավարության 06.11.2003թ. թիվ 1694 որոշման ընդունումից հետո:
- 2.5.7. Սակայն հարց է առաջանում, մի թե թիվ 551 որոշման ընդունումից հետո անցած 6 տարիների ընթացքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը և մի շարք պետական ձեռնարկություններ այդպես էլ չեն ձևակերպել ընկերությունների պարտքերը պայմանագրային տեսքով: Ի դեպ, պարտքերը, համաձայն թիվ 551 որոշման, ունեին 5 տարվա մարման ժամկետ, այսինքն պետք է լրիվ վճարված լինեին 2002թ.-ին, թիվ 1694 որոշման ընդունումից մեկ տարի ավելի շուտ:

## 2.6. Բյուջետային վարկ

- 2.6.1. Հանձնաժողովից նաև մեծ ջանքեր պահանջվեցին, որպեսզի լիարժեք պատկերացում կազմվի ԵԶԿՓԲԸ-ին տրամադրված բյուջետային վարկի ստացման և վճարման մասին:
- 2.6.2. Խնդիրը կայանում էր նրանում, որ բյուջետային վարկը հիշատակվում էր հանձնաժողովի տրամադրության տակ առկա ինֆորմացիայի բոլոր աղբյուրների կողմից, սակայն չէին համընկնում վարկի տրամադրման ժամկետները: Բացի այդ, տարբեր աղբյուրները բերում էին վարկի տարբեր գումարներ: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տվյալներով տրամադրված վարկի գումարը կազմել էր 9 599 554 500 դրամ (մոտ 9.6 մլրդ), իսկ ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ցուցանիշը 10 մլն դրամով պակաս էր:
- 2.6.3. Հանձնաժողովին հաջողվեց ի վերջո պարզել, որ ԵԶԿՓԲԸ վերադարձրել է 10 մլն դրամը պետական բյուջե դեռևս 1999թ.-ին: Ջրամատակարարման պարտքի դիմաց ՀՀ ներքին գործերի նախարարությունը կատարել է 10 մլն դրամի չափով վճարում, որի չափով նվազեցվել է ԵԶԿՓԲԸ պարտքը բյուջեին: Հանձնաժողովին տրամադրվել է այդ վճարման հանձնարարականը, որը բավականին վիճելի փաստաթուղթ է: 10 մլն դրամի վճարումը, ըստ անդորրագրի, կատարվել է 25-ը տասներեքերորդ 1999թ.-ին:
- 2.6.4. Բյուջետային վարկը տրամադրվել է ԵԶԿՓԲԸ-ին մի քանի վարկերի ձևով և միավորվել է որպես մեկ վարկ 2000թ.-ի փետրվարին: Խոշոր վարկը կազմող վարկերի ստացման ժամկետները այդպես էլ չի հաջողվել հստակ պարզել, քանի որ ինֆորմացիայի տարբեր աղբյուրները տրամադրել են իրարամերժ տվյալներ:
- 2.6.5. Այսպես, պարզ չէ թե երբ է ԵԶԿՓԲԸ ստացել առաջին վարկը, որի գումարը կազմել է 1.4 մլրդ դրամ: Համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Գանձապետարանի տվյալների, այն տրամադրվել է 1996թ. վերջին, դա հաստատում է նաև KPMG անկախ աուդիտորի հաշվետվությունը: Սակայն 1.4 մլրդ դրամ վարկային պայմանագիրը կնքվել է 1997թ. հուլիսի 1-ին:
- 2.6.6. Իրարամերժ էին նաև բյուջետային վարկին վերաբերվող այլ տվյալները: Այսպես, KPMG անկախ աուդիտորի հաշվետվություններում նշվում էր, որ բյուջեից ստացված վարկը ապահովված չէ գրավով: Մյուս կողմից, ՀՀ ֆինանսների և



Էկոնոմիկայի նախարարությունը տրամադրել էր 1998թ.-ին ԵԶԿՓԲԸ-ի հետ կնքված գրավի պայմանագրի կրկնօրինակը:

- 2.6.7. Բացի այդ, KPMG անկախ ասուդիտորի 1999թ. տարեկան հաշվետվության մեջ խոսվում է մեկ բյուջետային վարկի մասին, սակայն բյուջեից ստացված վարկերը միավորվել են մեկ վարկի ձևով 2000թ.-ին: Հարց է առաջանում, ինչպես է ասուդիտորը 1999թ.-ին ինֆորմացիա ստացել 2000թ.-ին իրականացված գործարքի վերաբերյալ:
- 2.6.8. Հանձնաժողովին հաջողվեց պարզել, որ բյուջետային վարկը տրամադրվել է 1996-1999թթ.՝ ԵԶԿՓԲԸ Էլեկտրաէներգիայի գծով առաջացած պարտքերի վճարման նպատակով: 2003թ. նոյեմբերի 6-ին ընդունված ՀՀ Կառավարության թիվ 1693 որոշման համաձայն վարկի մայր գումարի մնացորդը, տուգանքները և տղաճը, որոնց ընդհանուր գումարը գերազանցում էր 6.5 մլրդ դրամը, ներվել է:

## 2.7. Համաշխարհային բանկի կողմից ստացված վարկի ձևակերպումը ԵԶԿՓԲԸ հաշվեկշռում

- 2.7.1. KPMG անկախ աուդիտորական ընկերությունը իր տարեկան հաշվետվություններում բազմիցս նշել է այն փաստը, որ «...*հաշվապահական քավարար գրառումների բացակայության պատճառով ԵԶԿՓԲԸ չի գրանցել Համաշխարհային Բանկից ստացված վարկի վճարման ենթակա ամբողջ գումարը, ինչպես նաև չի գրանցել վարկի գծով պայմանագրի համաձայն վճարման ենթակա տոկոսավճարները և նմանատիպ վճարները...*»:
- 2.7.2. Այս կապակցությամբ հարկ է հիշեցնել, որ վարկի օգտագործումը իրականացվում է Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակի կողմից (ՀԶԾՂԳ), որը Օպերատորի պատվերով կատարում է անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների գնումները: Գնված ապրանքների և ծառայությունների ընդունող է հանդիսանում ԵԶԿՓԲԸ, որը հետագայում պետք է վերադարձնի վարկը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, որը իր հերթին այն կփոխանցի Համաշխարհային Բանկին:
- 2.7.3. ՎԴՄՕ հանձնաժողովը դիմել է ԵԶԿՓԲԸ ղեկավարությանը՝ փորձելով պարզել, թե ինչն է պատճառը, որ վարկային միջոցների ստացումը չի արտացոլվում ընկերության հաշվապահական հաշվեկշռում: ԵԶԿՓԲԸ ֆինանսական գծով տնօրեն Հ. Մարությանի խոսքերով, ընկերության հաշվապահական հաշվեկշռում վարկային միջոցների բացակայության պատճառ է հանդիսանում ՀՀ Կառավարության կողմից համաֆինանսավորման ուշացումները: Գնված ապրանքների և ծառայությունների համապատասխան ձևակերպում տալիս, անհրաժեշտ է հաշվարկել ՀՀ Կառավարության համաֆինանսավորման գծով ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), սակայն հաշվարկել ԱԱՀ-ը առանց համաֆինանսավորման միջոցների ստացման ընկերությունը ի վիճակի չէ, քանի որ դա կհանդիսանա գործող օրենսդրության խախտում:
- 2.7.4. Սակայն, ՎԴՄՕ հանձնաժողովին ԵԶԿՓԲԸ կողմից տրամադրված տեղեկանքում գրված է. «...ՀՀ Կառավարության մասնակցության 4 մլն դոլար գումարը, համաձայն Վարկային պայմանագրի, հատկացվել է ԵԶԿՓԲԸ ընթացիկ աշխատանքային և շահագործման ծախսերի ֆինանսավորմանը:

## 2.8. ԵԶԿՓԲԸ հիմնական միջոցների վերագնահատում

- 2.8.1. ՀՀ Կառավարության 29.12.2001թ.թիվ 1302 որոշման համաձայն իրականացվել է ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայության տակ գտնվող ձեռնարկությունների, այդ թվում ԵԶԿՓԲԸ-ի, հիմնական միջոցների և անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների վերագնահատումը:
- 2.8.2. ԵԶԿՓԲԸ հիմնական միջոցների վերագնահատումը իրականացրել է «Աուկոն» աուդիտորական ընկերությունը, որը ներկայացրել է վերագնահատման ամփոփագիրը 01.07.2002թ. դրությամբ: Վերագնահատումը իրականացվել է համաձայն 23.10.2001թ. ընդունված ՀՀ Օրենքի, որը սահմանել է հատուկ կանոններ ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայության տակ գտնվող ձեռնարկությունների հիմնական միջոցների և անավարտ ոչ ընթացիկ միջոցների վերագնահատման համար:
- 2.8.3. Վերականգնողական արժեքը կազմել է 83 625 336 107 դրամ (մոտ 83.6 մլրդ), վերագնահատված մաշվածությունը՝ 55 064 602 795 դրամ (մոտ 55 մլրդ), արդյունքում վերագնահատված արժեքը կազմել է 28 560 733 312 դրամ (մոտ 28.5 մլրդ):
- 2.8.4. ՀՀ Կառավարության 13.12.2002թ. թիվ 1952 որոշմամբ վերագնահատման արդյունքները գրեթե նույնությամբ հաստատվել են:
- 2.8.5. Վերագնահատման արդյունքները պետք է համալրեին ԵԶԿՓԲԸ սեփական կապիտալը և, համաձայն ՀՀ Կառավարության 29.12.2001թ. թիվ 1302 և 13.12.2002թ. թիվ 1952 որոշումների, արտացոլվեին ընկերության 2002թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռներում: Սակայն վերագնահատման արդյունքները, ըստ KPMG 2003թ. տարեկան հաշվետվության, արտացոլվել են ԵԶԿՓԲԸ հաշվապահական հաշվեկշռում, ինչպես նաև անկախ աուդիտորական հաշվետվությունում, միայն 2003թ.-ին:
- 2.8.6. Միևնույն 2003թ.-ի ընթացքում ԵԶԿՓԲԸ հաշվարկել է հիմնական միջոցների մաշվածության, որի գումարը կազմել է 6 006 238 000 (մոտ 6 մլրդ) դրամ: Փաստորեն , 2003թ.-ի ընթացքում ԵԶԿՓԲԸ, մի կողմից, գրանցել է հիմնական միջոցների վերագնահատման արդյունքները, մյուս կողմից՝ հաշվարկել դրանց մաշվածությունը:

2.8.7. Կարևոր է նաև նշել, որ համաձայն «Աուկոն» ընկերության վերագնահատման աղյուսակի վերագնահատված արժեքի աճը գրանցվել է հիմնականում «Կառուցվածքներ» և «Շենքեր, շինություններ» հոդվածներով՝ կազմելով ընդհանուր ցուցանիշի մոտ 85 տոկոսը: Սակայն KPMG աուդիտորական ընկերության կողմից պատրաստված 2003թ. տարեկան ֆինանսական հաշվետվության մեջ բերված են այլ ցուցանիշներ: Համաձայն KPMG-ի, վերագնահատված արժեքի մոտ 55 տոկոսը կազմում է «Սեքենասարքավորում» և «Փոխադրամիջոցներ» հոդվածների արժեքը: Ինչպես հայտնի է, սարքավորման և փոխադրամիջոցների մաշվածության ժամկետը կազմում է 5 տարի, այսինքն յուրաքանչյուր տարի դրա արժեքից կարելի է հաշվարկել մաշվածություն՝ արժեքի 20 տոկոսի չափով, ի տարբերություն շենքերի և կառուցվածքների, որոնց մաշվածության ժամկետը կազմում է 20 տարի: Բացի այդ, մաշվածության խոշոր գումարներով հաշվառումը բերում է ինքնարժեքի աճի:

2.9. **KPMG անկախ աուդիտորական ընկերության գործունեությունը**

2.9.1. Հարկ է առանձին ուշադրություն հրավիրել KPMG ընկերության գործունեությանը, որը Համայնքային զարգացման ծրագրի իրականացման ընթացքում կատարել է ԵԶԿՓԲԸ-ի անկախ աուդիտը և կազմել տարեկան ֆինանսական հաշվետվությունները: Աուդիտորի հաշվետվությունները ներկայացվում են Համաշխարհային Բանկին և դրա դիմաց վճարվում են վարկային միջոցներից: Չորս տարիների ընթացքում ֆինանսական և տեխնիկական աուդիտի համար վարկային գումարներից վճարվել է մոտ 0.5 մլն դոլար:

2.9.2. ԵԶԿՓԲԸ ֆինանսական գործունեության ուսումնասիրման ընթացքում, ՎԳՄՕ հանձնաժողովի մոտ առաջացել էին մի շարք հարցեր՝ կապված անկախ աուդիտորական հաշվետվություններում արտացոլված տվյալների հետ: Պարզաբանումներ ստանալու նպատակով, հանձնաժողովի հերթական նիստին հրավիրվել էր KPMG ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն պրն. Ա. Քուչուկյանը, սակայն վերջինս հրաժարվել էր հանդիպումից: Հանձնաժողովը դիմել է KPMG ընկերությանը նաև գրավոր ձևով՝ փորձելով ստանալ առաջացած հարցերի պատասխանները: Ի պատասխան իր գրությունների, հանձնաժողովը ստացել է KPMG ընկերությունից մի նամակ: Աուդիտորը գրում է. *«ԵԶԿՓԲԸ (Ընկերություն) տարեկան ֆինանսական հաշվետվությունները նախապատրաստվել են Ընկերության ղեկավար մարմնի կողմից, որը պատասխանատու է դրանցում արտացոլված տվյալների համար: Խնդրում ենք տարեկան ֆինանսական հաշվետվությունների հետ կապված բոլոր հարցերը հղել Ընկերության ղեկավարությանը»*: Սակայն հանձնաժողովին հետաքրքրում էին KPMG-ի կողմից կազմված հաշվետվությունների հակասական տվյալները:

2.9.3. Մյուս կողմից, ԵԶԿՓԲԸ պաշտոնատար անձինք բազմիցս բանավոր նշել են, որ որևէ պատասխանատվություն չեն կրում անկախ աուդիտորական հաշվետվություններում արտացոլված տվյալների համար՝ մատնանշելով այն փաստը, որ *«անկախ աուդիտորը նախապատրաստում է հաշվետվությունները համաձայն հաշվապահական միջազգային նորմերի, որոնք ընդունելի են Համաշխարհային Բանկի կողմից»*: Բացի այդ 30.08.2004թ. թիվ 41/01-809 նամակում, որը ստորագրվել է ԵԶԿՓԲԸ տնօրեն Ռ. Վուլկլինգի կողմից ասվում է հետևյալը. *«...KPMG աուդիտորական ընկերությունը իր հետևությունների մեջ անկախ է...»*, *«... ֆինանսական աուդիտի հաշվետվությունները կազմվել են անկախ աուդիտորական կազմակերպության կողմից և ընկերությունը չի կարող*

*ագրել աուդիտորի վրա և պարտադրել նրան, թե ինչ հոդվածներով և ինչպես կազմվի աուդիտորական ֆինանսական հաշվետվությունները...»:*

- 2.9.4. Այնուամենայնիվ, ԵԶԿՓԲԸ ղեկավարները, հանձինս գլխավոր տնօրեն Ռ. Վոլկլինգի, գլխավոր հաշվապահ Լ. Գրիգորյանի և ֆինանսական գծով տնօրեն Հ. Մարությանի, ստորագրել են KPMG ընկերության կողմից նախապատրաստված ֆինանսական հաշվետվությունները, որոնք մի շարք անճշտություններ են պարունակում:
- 2.9.5. Այսպես, 2002թ. հաշվետվությունում արտացոլված էլեկտրաէներգիայի գծով ծախսերի ցուցանիշը 10 անգամ նվազեցվել է, ավելին, նախորդ տարվա հաշվետվությունից տեղափոխված ցուցանիշը ևս 10 անգամ պակասեցվել է:
- 2.9.6. KPMG կողմից պատրաստված հաշվետվությունների ֆորմատը տարեց տարի փոփոխվում է: Օրինակ, սկզբում էլեկտրական էներգիայի գծով ծախսերը արտացոլվում էին առանձին հոդվածով, սակայն այսօրվա հոդվածը հաշվետվություններից հեռացվել է և հաշվետվությունում ներկայացվել է առևտրային պարտքի ամփոփ ցուցանիշը, որը թույլ չի տալիս պատկերացում կազմել էլեկտրաէներգիայի պարտքի չափի մասին:
- 2.9.7. KPMG ընկերության կողմից նախապատրաստված հաշվետվություններում առավել ակներև բացթողումներից կարելի է համարել նաև ՀՀ Կառավարության որոշումների ոչ հստակ արտացոլումը: Բացի այդ հղումները ՀՀ Կառավարության որոշումներին կատարվում են՝ չնշելով որոշման ընդունման հստակ ամսաթիվը և համարը:
- 2.9.8. ՎԴՄՕ հանձնաժողովը համոզված է, որ անկախ աուդիտորի նման անփույթ գործելակերպը անընդունելի է: Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել, թե ով է պարտավոր տալ պարզաբանումներ աուդիտորական հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների վերաբերյալ:

## 2.10. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի խախտում

- 2.10.1. Ինչպես արդեն նշվել է, ՀՀ Կառավարության 06.11.2003թ. թիվ 1693 որոշման համաձայն իրականացվել է ԵԶԿՓԲԸ ֆինանսների վերակառուցում, որի արդյունքում մարվել է ընկերության պարտքը բյուջետային վարկի գծով և վճարվել է էլեկտրաէներգիայի գծով պարտքի զգալի մասը: ԵԶԿՓԲԸ տրամադրել է հանձնաժողովին բանկային փաստաթղթեր, որոնք վկայում են այն մասին, որ ֆինանսական գործարքները իրականացվել են 2003թ. դեկտեմբերի 11-ին, սակայն դրանք չեն արտացոլվել ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունում:
- 2.10.2. 2003թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ՀայԽնայԲանկի միջոցով փոխանցել է ԵԶԿՓԲԸ-ին 1693 որոշմամբ նախատեսված 10 311 994 251 դրամը (մոտ 10.3 մլրդ դրամ): Նույն օրը «ՀայջրմուղԿոյուղի» ընկերությունը փոխանցել է ԵԶԿՓԲԸ-ի հաշվին 2 457 000 000 (մոտ 2.5 մլրդ) դրամի չափով գումար: Մինևնույն ժամանակ ԵԶԿՓԲԸ ստացված գումարներից վճարել է իր պարտքերի դիմաց. 7 084 000 000 (մոտ 7 մլրդ) դրամ «ՀայԳազԱրդ» ընկերությանը՝ էլեկտրաէներգիայի պարտքի գծով, 4 516 000 000 (մոտ 4.5 մլրդ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ բյուջետային վարկի մարման նպատակով և 1 168 994 251 (մոտ 1.17 մլրդ) դրամ բնապահպանական վճարի պարտքի դիմաց:
- 2.10.3. Ֆինանսական գործարքների իրականացումը 2003թ. դեկտեմբերի 11-ին հանդիսանում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կոպիտ խախտում, քանի որ այդ օրվա դրությամբ ՀՀ Կառավարության 06.11.2003թ. թիվ 1693 որոշումը դեռ ստորագրված չի եղել ՀՀ Վարչապետի կողմից և վավերացված չի եղել ՀՀ Նախագահի կողմից: Թիվ 1693 որոշման մեջ նշված է, որ այն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Համաձայն ԻՐՏԵԿ համակարգի տվյալների, ՀՀ Կառավարության 06.11.2003թ. թիվ 1693 որոշումը ՀՀ Վարչապետի կողմից ստորագրվել է 2003թ. դեկտեմբերի 19-ին, ՀՀ Նախագահի կողմից վավերացվել է 2003թ. դեկտեմբերի 25-ին, իսկ ուժի մեջ է մտել 2004թ. հունվարի 22-ին:
- 2.10.4. Մյուս կողմից, չնայած նրան, որ ֆինանսական գործարքները իրականացվել են 2003թ. դեկտեմբերի 11-ին ստացված ավելի քան 10 մլրդ դրամի բյուջետային աջակցությունը արտահայտություն չի գտել ընկերության տարեկան հաշվետվության մեջ և նաև չի արտացոլվել հարկային ծառայության ամփոփ փաստաթղթերում, ինչը բանավոր հաստատել է նաև ԵԶԿՓԲԸ ֆինանսական գծով տնօրեն Հ. Մարությանը: